# ՆՈՐ-ԴԱՐ

№ 143 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 15 Սեպտեմբերի 1901 Շաբաթ, 15 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 143

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., համարը 5 կ.:
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի հարիւրամեակ:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Բագուից: Շուշուից:
Թղթակցութիւններ.—Երևանից:
Քաղաքական.—Հարաւային Աֆրիկա:
Հեռագրական լուրեր:
Ֆէլյէտօն.—«Հայելի»:
Յայտարարութիւններ:

## ՄԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

(Վրաստանի միացումը Ռուսիայի հետ)

Ինչպէս յայտնի է, Վրաստանը Ռուսիայի հետ միացնելու հարիւրամեակի յոբելեանը պաշտօնապէս պիտի տօնուի սոյն սեպտեմբերի 25-28-ին. բայց յիշեալ հարիւրամեակը լրացաւ այս ամսի 12ին, որովհետև այդ օրն էր, որ Կայսր Ալէքսանդր I-ն ստորագրեց այն նշանաւոր հրովարտակը, որով Վրաստանը վերջնականապէս միացած էր յայտարարւում Ռուսիայի հետ:

Վրաստանը սրանից հարիւր տարի առաջ շատ ողբալի վիճակի մէջ էր: Երկիրը թուլացած էր պարսից շահ Աղա-Մահմէդ-խանի արշաւանքից (1795), վարչական պաշտօնները թաւադների համար դարձել էին ժառանգական, չկար մշտական զօրք թագաւորութիւնն արտաքին արշաւանքներից զերծ պահելու և ներքին խռովութիւնները զսպելու համար: Գիւղերի անապահովութիւնն ու դատաւորների կաշառակերութիւնը լրացնում էին անկարգութիւնները: Թոյլ կամքի տէր և հիւանդ Գէորգի II թագաւորը (Հերակլի որդին) դարձել էր անունով միայն իշխող. Նրա հրամանները չէին կատարւում. Լեզգիներից բաղկացած վարձկան զօրքն անպատիժ կերպով կողոպտում էր բնակիչներին նոյն իսկ մայրաքաղաքում — Թիֆլիսում: Արքայական ընտանիքում մեծ պառակտում կար թագաւորի եղբայրների և որդիների մէջ: Գէորգի II-ի եղբայրը՝ Ալէքսանդրը դաւադրութիւն էր սարքել թագաւորի դէմ, Վրաստանի թագը նրանից խլելու համար. այս բանում Ալէքսանդրին զօրեղապէս օգնում էր իւր մայրը՝ թագուհի Դարիան, որը խիստ հակառակ էր Գէորգի II-ին (վերջինս նրա խորթ որդին էր) և Վրաստանը Ռուսիային յանձնելու համար նրա ունեցած մտադրութեանը: Ալէքսանդրը մինչև անգամ միացաւ Աւարիայի Օմար խանի հետ և Դաղստանից գալով յարձակւում գործեց Վրաստանի վրայ, բայց այդ միջոցին գեներալ Լազարևը ցրեց Օմարխանի զօրքերը, և Ալէքսանդրը փախաւ Շուշի՝ Իբրահիմ խանի մօտ:

Ահաւասիկ մասամբ երկրի այս վիճակն և մասամբ իրեն Գէորգի II-ի անձնական ցանկութիւնն էր պատճառ, որ ռուսներն եկան տիրեցին Վրաստանին: Գէորգին համոզուած էր, որ Ռուսիայի հովանաւորութիւնը միայն կարող էր երկիրը փրկել անիշխանութիւնից և պատուար կանգնել մահմեդական ցեղերի արշաւանքներին: Իւր այս որոշումը նա Պետերբուրգ ուղարկած մի պատգամաւորութեան բերանով յայտնեց Կայսր Պաւէլ I-ին: Կայսրը պատրաստակամութիւն յայտնեց Վրաստանի թագաւորին և նրա ժողովրդին իւր հովանաւորութեան տակ առնելու, սակայն այն պայմանով, որ թագաւորն ու ժողովուրդը յատուկ թղթով երկրորդ անգամ իրենց ցանկութիւնը կըյայտնեն Ռուսիայի հպատակութիւնն ընդունելու: Թագաւորին խոստացւում էր, որ նա թագաւոր կըմնայ մինչև իւր մահը, երկիրը կըդառնայ ռուսական մի նահանգ «Վրաց թագաւորութիւն» անունով, նահանգապետը կըլինի Գէորգի II-ի որդին՝ Դաւիթը թագաւորի տիտղոսով, իսկ այդ միջոցին Վրաստանում գտնուած Լազարևի զօրքերի թիւը կաւելացնուի: Մինչ վրաց պատգամաւորները կըվերադառնային Վրաստան, որ կայսրի այս խոստումները յայտնեն թագաւորին, լուր հասաւ, թէ Գէորգի II-ը մեռնում է: Այս բանը Պաւէլ I-ին ստիպեց փութացնել Վրաստանի միացման գործը: Կայսրը խնդիրն առաջարկեց պետական խորհրդի քննութեան: Պետական խորհուրդն անհրաժեշտ գտաւ Վրաստանը միացնելու Ռուսիայի հետ, և 1800 թ. դեկտ. 18-ին Կայսրն ստորագրեց միացման հրովարտակը: Այդ հրովարտակն ուղարկուեց գեներալ Կնօրրինգին վրաց ժողովրդին յայտարարելու համար: Սակայն այդ միջոցին (դեկտեմբերի 28 ին) մեռաւ Գէորգի II-ը, և հրովարտակը մնաց առանց յայտարարուելու, որովհետև յայտարարումը տեղի պիտի ունենար այն ժամանակ, երբ Գէորգի II-ի պատգամաւորները Թիֆլիսից վերադառնային Պետերբուրգ իրենց հետ տանելով թագաւորի և ժողովրդի թուղթը, որով նրանք ցանկութիւն պիտի յայտնէին ռուսաց հպատակութիւնն ընդունելու: Հրովարտակի հրատարակումը տեղի ունեցաւ միայն 1801 թ. փետրուարի 16-ին և 17-ին:

Բայց դրանով չորոշուեց Վրաստանի վիճակը. խռովութիւնները սաստկանում էին, Գէորգի II-ի որդին՝ Դաւիթը պաշտպանում էր և պահանջում իւր գահաժառանգութեան իրաւունքը: Իբրև անորոշութեանը նպաստեց Պաւէլ I-ի մահը: Արքայազն Դաւիթը դիմեց Ալէքսանդր I-ին և խնդրեց իրեն Վրաստանի թագաւոր հաստատել: Կայսր Ալէքսանդր I-ը Վրաստանի միացման խնդիրը նորից առաջարկեց պետական խորհրդի քննութեան: Պետական խորհուրդը, ինչպէս և Պաւէլ I ի օրօք, անհրաժեշտ համարեց միացումը: Սակայն կայսրը, որի համար թանկ էին ազատութեան սկզբունքները, յապաղում էր այդ վճիռն ի կատար ածել, այնպէս որ խնդիրն երկրորդ անգամ առաջարկեց պետական խորհրդի քննութեան: Պետական խորհուրդը նոյն վճիռը կայացրեց: Այն ժամանակ Կայսրը գեն. Կնօրրինգին ուղարկեց Վրաստան, որ մանրամասն զեկուցում տայ երկրի վիճակի մասին: Գեն. Կնօրրինգը զեկոյց, որ Վրաստանն արագապէս քայքայւում է և անպատճառ կըկործանուի ներքին խռովութիւններից և արտաքին արշաւանքներից, եթէ Ռուսիան օգնութեան չհասնի: Այս բանից յետոյ վերջապէս Կայսր Ալէքսանդր I-ն ստորագրեց իւր 1801 թ. սեպտեմբերի 12-ի նշանաւոր հրո-

## ՖԷՅԼԻԵՏՕՆ

## ՀԱՅԵԼԻ

[illegible] ամաչում, որ փող չտուած կարդում [illegible]

Զաւեշտական հրատարակութիւն

Լոյս է տեսնում ամիսը մի անգամ

ԺԸ տարի

№ № յունիս, յուլիս և օգոստոս

Յայտարարութիւնները տպւում են ձրի

Խմբագրատունը միշտ փակ է

Ստորագրուել ուզողները թող դիմեն Թիֆլիս «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրութեանը

Լուրջ թղթակցութիւններ չի ընդունւում

Ծնւում է Երևանում, մեռնւում Թիֆլիսում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի երկուհարիւրամեակ.—Սևերես Թոռչիք (Բանաստեղծութիւն).—«Հայելի»-ն և Թիֆլիսի ցուցահանդէսը.—Պարապ վարժապետներ.—Չօղալջալալ (Թղթ. «Հայելի»-ի).—Ընթերցողներին.—Նամակ խմբագրին.—Իմ պատասխանները (շար. և վերջ).—«Հայելի»-ի հեռագրներ:

### Մի երկուհարիւրամեակ

Մեր բոլոր լրագիրներն ու ամսագրերը երկար ու կարճ կենսագրականներ ու առաջնորդողներ են նուիրում Մխիթարեան միաբանութեան երկուհարիւրամեակի առիթով, որ կատարուեց օգոստոս ամսի 26-ին: «Հայելի»-ի խմբագրութիւնն աւելորդ կրկնութիւնների մէջ չընկնելու համար և յիշատակ այդ տօնելի օրւան տպագրում է իւր մի նոր բանաստեղծի ոտանաւորը՝ «Սևերես Թոռչիք» անունով:

—

Սևերես Թոռչիք

Երկերիւր տարի
Մեզնից խռոված
Հալալ հին պապի
Անարժան որդիք—
Սևերես Թոռչիք,
Վան ու Գեղամայ
Ծովերն են մտել,
Միշտ թոռ են ձգում,
Որսում են որսում
Ու չեն կշտանում:

*

Թէ ծովեր, գետեր,
Վտակ, լիճ, աղբիւր
Մեր համեղ, սիրուն
Անմեղ ձկներից
Թափուր են մնում:
Օտար ջրի մէջ
Կոյտառ ձկները
Համր փոխում են.
Տեսնում ենք, զգում՝
Ցնծում ու գովում:

*

Ոչ լօքօ մնաց,
Ոչ իշխան, կողակ,
Ոչ բեղլու, բախտակ,
Ոչ տառեխ, բոջակ,
Ոչ էլ կարմրախայտ
Կամ թէ եարանի:
Բռնում են, տանում,
Թունդ հոտեցնում,
Աղում, ամբարում
Ու համից զրկում:
Օտար Նոր պապի
Մոլորուած որդիք
Թունդ քացխած, հոտած
Անպէտք ապրանքը
Երկերիւր տարի
Ղրկում են, ծախում՝
Աշխարհիս բոլոր
Հայ շուկաներում.
Գնում ենք, ուտում,
Երբէք չենք զզւում:
Երկերիւր տարի
Հոտած ձկներից
Մեր ստամոքսը
Խանգարուեց—նեխեց,
Բայց այսօր նորից
Կարած, մոլորուած
Ծալպականներ կան՝
Ջրերս էլ կամին
Սևերես թոռչից
Զոհ մատուցանել:

Ճպուռ

—

### «Հայելի»-ն եւ Թիֆլիսի ցուցահանդէսը

Ամսագրիս խմբագրութիւնը պարտք համարեց մասնակցել Թիֆլիսի ցուցահանդէսին՝ ինչով որ կարող էր: Այդ նպատակով նա ամսի 7-ից Թիֆլիս է ուղարկել իւր ներկայացուցչին—պ. Պապիս Թոռին, կարևոր հրահանգները տալով նրան:

Նոյն պարոնից ստացուած հեռագրի համաձայն, կարող ենք աւետել մեր ընթերցողներին, որ «Հայելի»-ի խմբագրութիւնը նոյն ցուցահանդիսում շուտով կունենայ իւր առանձին վիտրինը՝ ամբողջապէս շինուած հայելիազարդ խոշոր ապակիներից և լուսաւորուած ելեքտրական լուսով: Նրա մէջ տեղում, 50 սաժէն բարձրութեան վրայ պտտուելով՝ անդադար շրջան կառնի մի խոշոր ճիշտ անուաձև ճախարակ, որի տրամագիծը լինելու է 20 սաժէն: Կլոր ճախարակի շառաւիղներից և շրջապատից կախուած կըլինին այլ և այլ հին հին և նոր նոր դարուց յիշատակներ, որոնք «Հայելի»-ի բովանդակութեան նիւթ են եղել կամ պիտի լինին երբ և իցէ:

Այդ բազմաթիւ յիշատակներից մի քանիսն իբրև նմուշ մէջ բերելն աւելորդ չենք համարում:

Այնտեղ այցելուները կըտեսնեն նախկին ցուցահանդէսի շորաթանի ներկայացուցիչ միամիտ գիւղատնտեսի պատկերը, որ մածնի պուտուկը գլխին շուռ տալով՝ հաւատում է, թէ դարձել է հայ խմբագիրների ներկայացուցիչ: Պատկերի անունն է «Ձոկի անհաւատալի յառաջադիմութիւն»:

Կըտեսնեն Թաւրիզի մի հայ նոր տպարանի պատկերը, որի արագատիպ մամուլից արձակած լուսոյ ճառագայթները լուսաւորում են քաղաքի մութ ու խաւար փողոցները, տները և նրանց մէջ բնակուողներին, մանաւանդ տիկիններին և օրիորդներին: Արագատիպ մամուլի միջից կախ ընկած կըլինի «Մըկընդեղ» անունով մի նոր հայ լրագրի առաջին համարը հետևեալ անդրանիկ առաջնորդող յօդուածով.—«Ծրագիրները իրագործւում են»: Որովհետև Պարսկաստանի պոստն անկանոն և անապահով է, ուստի ապագայ լրագրի պայմաններից մէկը լինելու է այն, որ նա իւր բաժանորդների ձեռքը ոչ թէ պոստով է հասնելու, այլ սովորեցրած աղաւնիներով, որոնք այդ արհեստում հիմիկուանից արդէն վարժւում են մեծ քանակութեամբ, ինչպէս որ գործածական է պատերազմների միջոցին:

Կըտեսնեն Թիֆլիսի փողոցներից մէկում մի ընդարձակ սենեակ առանց կահկարասիքի և զարդի: Տախտի վրայ նըստած կըլինի մի նիհար պարոն՝ խորը քնի մէջ ընկած: Եթէ լաւ դիտեն, կըտեսնեն, որ ճանճերը խմբով հաւաքուած նրա բերանը, ականջները ու քիթն են մտնում և ազատ կերպով ներս ու դուրս անում, իսկ մի խումբ մկներ ու մկան ձագեր բնածի ծակ գրպաններից ելնելով արձակ համարձակ վազվզում են նրա ոտների տակ ու գլխի վրայ կամ արշաւում դատարկ սենեակի մի անկիւնից միւսը: Այս պատկերի տակ գրուած կըլինի «Եւ երկիրն էր անպատրաստ և հոգի աղքատութեան շրջէր ի վերայ սորա»: Նրա կողքին կըտեսնեն նկարած միևնոյն սենեակը, որ այժմ լցուած է զանազան գրքերի ծանր կապոցներով: Եթէ ուշի ուշով դիտէք, այդ գրքերի մեծ մասի ճակատին կըկարդաք «Հրատարակութիւն հայոց հրատարակչական ընկերութեան»: Գրքերը սխմուած լցուած են սենեակի ընդարձակ դարակները: Ճանճն ու մկներ չեն երևում, չքացել են: Անանուն սենեակն այժմ «Գուտենբերգ» խոշոր վերնագիրն ունի, իսկ նիհար պարոնն անճանաչելու չափ գիրացած՝ ինքնաբաւական կերպով կանգնած է սենեակի մէջ տեղում: Պատկերի տակ գրուած է «Աշալրջութեամբ նախկին հրատարակչական ընկերութեան վարչութեան բարեջան անդամոց՝ աղքատութիւնը իւր պատմուճանից մերկացաւ վարտակը, որով Վրաստանը վերջնականապէս միացուած յայտարարուեց Ռուսիայի հետ։

Պատմական և քաղաքական այդ նշանաւոր ակտով վերջացաւ վրաց թագաւորութիւնը եւ Վրաստանում ներքին խռովութիւններին վերջ դրուեցաւ ու երկիրն հասաւ այն վիճակին, որի մէջ գտնւում է այսօր։ Այսօր Վրաստանը վայելում է կուլտուրական խաղաղ զարգացման բոլոր բարիքները։

## ՔՐՕՆԻԿՕՆ

Կովկասեան յոբելեանական ցուցահանդէսում կոյրերի ուսումնարանի պաւիլիօնի մէջ երեքշաբթի և հինգշաբթի օրերն այցելուներին ցոյց է տրւում, թէ ինչպէս են կոյր աշակերտները կարդում ու գրում և արհեստներով պարապում, իսկ կիրակի օրերը ցոյց է տրւում միայն կարդալն ու գրելը։

— Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է քաղաքապատկան «Նաւթիս ճալա» կոչուած տեղում, Նաւթլուղում, նաւթաբեր հողաբաժինների համար աճուրդ նշանակել 1902 թ. յունուարի 30-ին և այդ մասին յայտարարել տեղական լրագրներում և մայրաքաղաքի մի քանի թերթերում:

— Այսօր, սեպտեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 8-ին, Դիդուբէում նշանակուած է Կովկասեան շրջանի զօրքերի զօրահանդէսը։

— Որոշուած է առաջիկայ յոբելեանական հանդէսներին Թիֆլիսում հրախաղութիւն սարքել սեպտեմբերի 27-ին կամ Սոլոլակի կամ թէ Արեւնալի լերան վրայ: Դալալինսկի պրասպեկտի վրայ յաղթական կամարն արդէն կառուցւում է։

— Ինչպէս յայտնի է, մինիստրների մասնաժողովի յուլիսի 4-ի Բարձրագոյնս հաստատուած որոշման համաձայն Թիֆլիսի քաղաքային իրաւասուների առաջիկայ ընտրութիւնները պիտի կատարուեն ոչ թէ ընտրողական մի ժողովում, ինչպէս մինչև այժմ էր լինում, այլ թաղական երեք ժողովում և Կովկասի կառավարչապետին է թողնուած որոշելու այդ թաղերը։ Ներկայումս կառավարչապետը որոշել է ընտրողական թաղերն այսպէս. ընտրողական առաջին թաղը պիտի կազմեն 1, 2, 3 և 4-րդ քաղաքամասերը, երկրորդ թաղը պիտի կազմեն 5, 6 և 7-րդ քաղաքամասերը և երրորդը—8, 9 և 10 րդ քաղաքամասերը:

— Սեպտեմբերի 11 ին Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակուած էր Եղիշէ վարդ. Մուրադեանի դէմ Զաքար Զանփոլադեանի յարուցած դատը, որով Զանփոլադեանը Եղիշէ վարդապետին մեղադրում է մամուլի մէջ իրեն զրպարտելուն համար։ Դատը յետաձգուեց, որովհետև մեղադրեալ վարդապետը չէր եկել դատարան։

— Սիօնի տաճարի աւագերէց հայր Եղիա Թիֆլիսի քաղաքային վարչութեանը խնդրամատոյց է եղել, որ քաղաքի գումարներից տարեկան մի որոշ գումար յատկացուի տաճարի երգեցիկ խմբի համար:

— Ռուսաց կայսերական գեղարուեստից ճեմարանի ձեռներէցութեամբ Թիֆլիսում հիմնուած գեղարուեստից ուսումնարանում պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի վերջերին։ Ցարդ աշակերտելու ցանկութիւն են յայտնել մօտ 70 հոգի։ Ուսումնարանը հիմնուած է 200 աշակերտի համար։

— Առաջիկայ յոբելեանական հանդէսներին մասնակցելու համար Թիֆլիս են հաւաքւում կովկասեան այն հին սպաները ու զինուորները, որոնք խաչեր ունին ստացած Կովկասում ծառայելուն համար։

— Կովկասեան ցուցահանդէսն իւր բացման օրից՝ սեպտեմբերի 2-ից սկսած մինչև սեպտեմբերի 12 ը, այսինքն 10 օրուայ ընթացքում տոմսակների վաճառումից մուտք ունեցել է 9,477 ռ. 40 կ.։

— «Կաւկ. Վեստ.» ամսագրի խմբագիր Պ. Ն. Բեգիչև հրաժարուելով այդ ամսագրի խմբագրի պաշտօնից, խմբագիր է հաստատուած նոյն ամսագրի արտօնատէր-հրատարակիչ Վ. Դ. Ղորղանով։

— «Նով. Օբ.»-ի ասելով, խնդիր է յարուցուած Շամախու մօտ բանալու աղջկանց դպրոց շերամապահութեան, գործութեան և կաթնատնտեսութեան բաժանմունքներով:

— Զօրքերի պարադն անձրևային եղանակի պատճառով յետաձգուած է սեպտ. 15-ին. Այս պարադին կը մասնակցէ 50 հազար զօրք։

— Պարսից շահի ծննդեան օրը, սեպտեմբերի 15-ին, Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսը կընդունէ շնորհաւորողներին։

— Կովկասեան ցուցահանդէսը բաց է այցելուների համար առաւօտեան ժամը 9 և կէսից մինչև երեկոյեան ժամը 5 և կէսը։ Երեկոյեան զուարճութիւններն սկսւում են ժամը 8-ին:

— Խմբագրութիւնս ստացաւ Նոր-Ջուղայի ազգային բոլոր հաստատութիւնների 1900 թ. տարեկան եկամտացոյցը, որից երեւում է որ 1) Ամենափրկչեան վանքի յիշեալ տարուայ մուտքը եղել է 51,495 ղռ. $12^{1}/_{2}$ շահի, իսկ ելքը– 35,568 ղռ, $17^{1}/_{2}$ շահի. 2) Նոյն վանքի տպարանը մուտք ունեցել է նոյն թուին 3,536 ղռ. $19^{1}/_{2}$ շահի, իսկ ելք —1699 ղռ. 04 շահի. 3) ս. Աստուածածին և Բեթղահէմի եկեղ. մուտք 2,371 ղռ. 17 շահի, իսկ ելք - 1,983 ղռ. 14 շահի. 4) Չարսու թաղի ս. Յովհաննու եկեղեցին նոյն տարուայ ընթացքում մուտք ունեցել է 2,508 ղռ. 01 շահի, իսկ ելք—1520 ղռ. 14 շահի. 5) Քօչէր թաղի ս. Նէրսէս եկեղեցու մուտքը եղել է նոյն թուին 1021 ղռ. 10 շահի, իսկ ելք —1018 ղռ. 13 շահի. 6) Ցակորճանեանց թաղի ս. Ստեփաննոս եկեղեցին յիշեալ թուին ունեցել է մուտք 1,024 ղռ. 04 շահի, իսկ ելք – 645 ղռ. 09 շահի. 7) Երեւան թաղի ս. Ամենափրկիչ եկեղեցու մուտքը եղել է այդ տարում 2,171 ղռ. 04 շահի, իսկ ելք —1,771 ղռ. 16 շահի. 8) Դավրէժ թաղի ս. Մինաս եկեղեցին մուտք ունեցել է 2,977 ղռ. $09^{1}/_{2}$ շահի. իսկ ելք— 2,575 ղռ. 02 շահի. 9) Նոյն ս. Մինաս եկեղեցու սեպհականութիւնը եղող մեծ և փոքր բաղանիսները նոյն թուին մուտք ունեցել են 1,970 ղռ. 11 շահի, իսկ ելք—1062 ղռ. 05 շահի. 10) Ղարագէլ թաղի ս. Նիկողայոս եկեղեցու մուտքն եղել է 165 ղռ. 15 շահի, ելքը—18 ղռ. 15 շահի. 11) Փոքր-մէյդանի ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցու մուտքը եղել է նոյն թուին 495 ղռ. $18^{1}/_{2}$ շահի, իսկ ելքը—նոյն չափ. 12) Ս. Գէորգ եկեղեցին մուտք ունեցել է 134 ղռ. 6 շահի, ելք—նոյնչափ 13) Նոյն ս. Գէորգ եկեղեցու կառուցանելիք աղքատանոցի մուտքը եղել է 1525 ղռ. $04^{1}/_{2}$ շահի, ելքը—12 ղռ., 14) Աղքատաց արկղն յիշեալ թուին մուտք ունեցել է 13,338. ղռ. 10 շահի, իսկ ելք—12,049 ղռ. 17 շահի. 15) Հիւանդախնամ ընկերութիւնը մուտք է ունեցել 2,090 ղռ., իսկ ելք—1,378 ղռ. 15 շահի. 16) Որբախնամ խնամակալ ընկերութիւնը նոյն թուին մուտք ունէր 3,709 ղռ. $19^{1}/_{2}$ շահի, իսկ ելք – 1219 ղռ. $6^{1}/_{2}$ շահի. 17) Խոյգան գիւղի հայոց ս. Մինաս դպրոցի մուտքն եղել է 662 ղռ. 10 շահի, ելքը—250 ղռ., 18) Մամուրա գիւղի հայոց Պօղոսեան դպրոցի մուտքն եղել է յիշեալ թուին 210 ղռ., իսկ ելքը—70 ղռ. 19) Սանգիբարան գիւղի հայոց ս. Պօղոս դպրոցի մուտքն եղել է 699 ղռ. $13^{1}/_{2}$ շահի, իսկ ելքը—465 ղռ., 20) Նոր-Ջուղա քաղաքի տղայոց ազգ. կեդր. և աղջկանց ս. Կատարինէ ուսումնարանի մուտքն եղել է 57:545 ղռ. 11 շահի, իսկ ելքը—56,968 ղռ. 13 շահի. 21) Կուսանաց ս. Կատարինէ անապատը յիշեալ թուին մուտք ունեցել է 6,336 ղռ. $13^{1}/_{2}$ շահի, իսկ ելք—4990 ղռ. 07 շահի։ 22) Բացի վերոյիշեալ հաստատութիւններից, Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքում հաստատուելիք հոգևոր դպրանոցը 1900 թ. յուլիսի 15-ից մինչև տարուայ վերջը մուտք ունեցել է 24,235 ղռ. $12^{1}/_{2}$ շահի։

— Արդէն երրորդ օրն է,որ եղանակը Թիֆլիսում անձրևային է. բուսականութիւնն առատ աճել կենդանացել է և գարնան պէս կանաչել են դաշտերը:

### ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲԱԳՈՒԻՑ. — Քիշնևից այստեղ եկաւ և ս. Էջմիածին մեկնեց Տիրայր վարդապետը։ Ինչպէս լսում ենք, հայր սուրբը հրաւիրւում է Երևանի թեմական դպրանոցի տեսչական պաշտօնով։

— Վերջապէս մեր հասարակութիւնը հասկացաւ, որ անհրաժեշտ է եկեղեցական երգեցիկ խումբ ունենալ։ Ներկայումս երկու երգեցիկ խումբ է կազմակերպւում, որոնք հազիւ թէ մինչև տարուայ վերջը պատրաստ լինեն։

— Հեռագրով Ս. Էջմիածին է կանչուած տեղիս գործակալ Արսէն վարդապետը։ Գործակալի պաշտօնը ժամանակաւորապէս յանձնուած է Եղիշէ քահ. Գեղամեանին։

—

ՇՈՒՇՈՒՑ. —Կիրակի, սեպտեմբերի 9-ին Պատարագից յետոյ հայոց և ռուսաց հոգևորականութիւնները հանդիսաւոր կերպով օրհնեցին հանգուցեալ Թ. Թամիրեանցի կառուցած ջրամբարը. արարողութիւնը վերջանալուց յետոյ,քաղ. Բենիկ վարդապետը դարձաւ ժողովրդին հանդէսին յարմար մի քարոզով, որով բացատրեց բարեգործութեան գաղափարը և բարեգործների նշանակութիւնը: Հանդէսին ներկայ էին քաղաքագլուխը, գաւառապետը և ստուար բազմութիւն, հանդէսը վերջանալուց յետոյ ժողովուրդը ցրուեց, իսկ պատուաւոր մարդիկ պատուեցին Մ. Թամիրեանցի բացօթեայ պատրաստած ճոխ սեղանը։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, 25 օգոստ.—Չգիտենք ինչ անէծք է ծանրանում մեր թեմական դպրանոցի վրայ, որ իւր 3/4 դար գոյութեան ընթացքում չկարողացաւ վերջապէս իւր համար մի տրադիցիա ստեղծել, մի ուղի բռնել և այնպէս գնալ։ Փոփոխութիւն, անվերջ փոփոխութիւն, և մինը վատ, քան միւսը. իսկ այդ անմիտ և անհետևական փոփոխութեան հեղինակ պատճառը հոգաբարձութիւն կոչուած բոլորովին անմիտ ու անաքրոնիզմ դարձած յառաջադիմութեան և բարօրութեան տերմոզն է. (գոնէ շատ քիչ բացառութեամբ Երևանի թեմական դըպրանոցի հոգաբարձութիւնն արժանի է այս անուան): Ի՞նչ է արդի հոգաբարձութեան մատուցած ծառայութիւնը և կատարած դերը. —առաջինը զերոյից էլ քիչ. իսկ երկրորդը՝ խանգարիչ:

Հոգաբարձութիւնը կոչուած է միայն դպրանոցի նիւթականի համար օգտակար լինելու, նոր աղբիւրներ բանալու, եղածներն աւելի արդիւնաւորելու համար. իսկ մեր մեծապատիւ աղա հոգաբարձուները բաւականանում են միայն այն բանով, որ գնում են և կոնսիստո-

---

և հարստութեան հանդերձ հայաւ։ Գեցցէն նրանք և աւելի ևս շատ ապրեն Երևանի թեմական դպրոցի հոգաբարձուները, որ իրենց դպրոցի հասանելիքի մի խոշոր մասը ծանրութիւն համարեցին հետները տանել և թողին, որ սեպհականէ նախկին դրապահը և Թիֆլիսի գրավաճառների թիւը մէկով էլ աւելցնէ»։

Կտեսնեն մի փաստաբանի պատկեր, որի ճակատին սև մուրով դրոշմել են նրա անուան գլխատառերը, որ ուրիշի հետ փոխս չընկնի: Պատկերի տակ գրուած կլինի «Ընտիր մատենախօս,որին ամենքը պատասխանում են իւր ստախօսութեան համար կամ ապտակով և կամ մրով, այնքան համարձակ է, որ ոչ Աստուծուց է վախենում, ոչ էլ մարդկանցից ամաչում։ Ժամանակակից յանդուգն, որի երեսի կաշին ամենաընտիր ապրանքն է պինդ կօշիկների համար ներբանի համար»։

Կտեսնեն մի հաստափոր և նոր լոյս տեսած գիրք «Վարդապետացուների խընդիր» վերնագրով, որի թերթերը շատ շատ մի առանձին յատուկ մեքենայով շրջուելով՝ ցոյց են տալու մեր ապագայ ընտիր վարդապետների պատկերներն ու ազգանունները: Հետաքրքիր դիտողներն այդտեղ կըգտնեն հայ ամուրի բոլոր ուսուցիչներին, որոնք վճռել են տեսուչ դառնալու համար անպատճառ վարդապետանալ։ Այդ գրքի վերջումը տպուած է խոշոր տառերով հետևեալ բառերը. «Ըզգաստամտութիւնը հայոց մէջ»։

Կտեսնեն մի մեծ խմբանկար կայտառ երիտասարդների, որոնք նստարանների վրայ նստած՝ գրիչ բռնել են սովորում: Այդ խմբանկարի անդամներն են խոհարարներ, նրանց օգնականներ, պրեկաշչիկներ, դուքնի աշկերտներ, մըսագործներ, համբալներ, կօշկակարներ, փինաչիներ, քիասչիներ, գինեվաճառներ, բախկալներ, գրաշարներ, բաղմոնչիներ, տիրացուներ, լաքէյներ, փախստականներ և այլն։

Խմբանկարի անունն է «Մի հայ լրագրի ապագայ գաւառական թղթակիցները, որոնք փոխանակելու են հներին»։

Այսքան նմուշներ բաւական համարելով առաջարկում ենք ընթերցողներին անձամբ այցելել ցուցահանդէսը և ի մօտոյ տեսնել մեր հետաքրքրական վիտրինը։

—

### *Պարապ վարժապետացու*

Հայոց լեզուի մի պարապ վարժապետացու հակառակ ընդունուած սովորութեան ուղարկել է մեզ իւր շարադրութեան ու ոճի մի օրինակը, խնդրելով որ տպագրենք «Հայելի»-ի մէջ և մեր թեմական դպրոցների վարչութիւնների ու տեսուչների ուշադրութիւնը խընդրենք նրա աննախանձելի դրութեան վըրայ:

Որովհետև սեպտեմբեր ամիսն է և մենք համոզուած ենք, որ այդ դպրոցներում հայկաբանութեան օրինաւոր ուսուցչի պէտք կըլինի, ուստի հաճութեամբ տպագրում ենք նրա ուղարկած նմուշն ի գիտութիւն կարօտ դպրոցների։ Չմոռանանք աւելցնել, որ հակառակ դէպքում նամակագիր վարժապետացուն համաձայն է ստանձնել նաև քարտուղարութեան պաշտօն, իսկ եթէ այդ էլ չյաջողի ծառայի՝ պաշտօնին էլ չէ չի ասել. մի խօսքով խստապահանջ չէ. ուզում է անպատճառ տեղաւորուել որևէ դպրոցում ինչ պաշտօնով կուզէ՝ թող լինի։

Ուղարկած շարադրութեան նմուշը հետևեալն է.—

«Վայր վարդապետ և տէր բարձր պատիւ

«Անհաւաղիկ ըստ կարի իմն թախանձանաց և ցաւագին պաղատանաց սորին այդ կին որ հանդէպ յառաջի քո յանդիման եղեալ իւրովն թղթով մի սակս թապաղավարութեան յեկեղեցւոյն սրբոյ զի յաւուրս միաշաբաթոյն խնդրելին դորա սուրբ հայր զայր իւր գալով ախտաժէտ և եղբօրն աւն իւրոյ անկեալ ի մահիճս անկողնոյ անբերելի ցաւօք այլ ի վերայ այսր ամենայնի՝ խնդրելին է ի ձէնջ զողորմութիւն ինչ այսչափ եսթ…»

«Զընթացս ի 1900 յամին և ի յամսեանն ի 1-ն յուլիսին, ծխատէր Ց… քահանայ մահտեսի Վ. ….ց յԱղէքսանդրապոլս»

Ց. Դ. խնդրատուն որովհետև քահանայ է, թող համոզուած լինի, որ եթէ դպրոցներում տեղ չգտնի՝ երբէք պարապ չի մնալ. լաւ գործակալ էլ կըլինի, որոնց թիւը շատ քիչ է մեզանում։

Բուզաքեա

—

### *Վաղարշապատ (Թղթ. «Հայելի»-ի)*

Տէր խմբագիր

Ես մի յիմար սովորութիւն ունիմ.—խիստ սիրահար եմ պատառած, բայց գրոտած թղթերի։ Աչքս դեռին ձգած՝ այդպիսի թղթեր ինքս էլ չգիտեմ ինչու եմ հաւաքում ու պահում։ Երբեմն, պարապ ժամանակս, այդ թղթերի կըտորտանքը լցնում եմ սեղանիս վրայ և աշխատում եմ կտոր կտորի կպցնել, մի բան դուրս բերել ու կարդալ։ Իսկական տէրերի համար անպէտք համարուած ու դէն շպրտուած այդ կտորտանքը երբ ես միացնում եմ, շատ անգամ այնպիսի՛ մտածելու բաներ եմ ստանում, որի կարդալըն ինձ շատ է զբաղեցնում։ Իմ արածն ու պարապմունքը մի անմեղ ու զուարճալի խաղ է, որով խորհուրդ կըտամ ձեզ էլ պարապելու: Ասածս զբաղմունքը ձեզ կրկնակի օգուտ կըտայ, մէկ որ ձեր պարապ և տաղտկալի ժամանակն աննկատելի կերպով կանցկացնէք և մէկ էլ որ «Հայելի»-ի համար զուարճալի նիւթերի գիւտ կանէք։ Այդ նպատակով է ահա, որ այս անգամ ձեզ ընծայ եմ ուղարկում իմ թղթի կտորտանք ժողովածուներից երկու մեծ տոպրակ, որոնց բովանդակութիւնը ժողովել եմ Էջմիածնի գաւթի աւելած թղթերի միջից։ Ըզբաղուէք դրանցով, գուցէ թէ դուք մի բան դուրս բերէք և «Հայելի»-ի մէջ տըպագրելով՝ թէ դուք զուարճանաք և թէ մեզ—ընթերցողներիս զուարճացնէք։

Ի. Ծ. Մըգմըդ

### *Ընթերցողներին*

Պ. Մըգմըդի վերոյիշեալ ընծայ տոպրակները յանձնեցինք մեր աշխատակից պ. Նորախոյզին և պատուիրեցինք անպատճառ մի զուարճալի բան դուրս բերել նրանց միջի թղթի կտորտանքից. ահա թէ ինչ է գրում պ. Նորախոյզը խմբագրին ուղղած իւր նամակով.

### *Նամակ խմբագրին*

Ձեր յանձնարարութիւնը կատարեցի ձեր պատուէրի համաձայն. ինչ որ դուրս եկաւ՝ ուղարկում եմ. Աչքերս քոռացնելու չափ յօդնեցի և թղթերի կտորտանքի յարմարեցնելուց հազիւ հազ հետևեալ հետաքրքրական նամակը դուրս բերի, որ ուղարկում եմ խմբագրութեանդ։ Երկրորդ տոպրակն առանց ձեռք տալու նոյնութեամբ յետ եմ ուղարկում և հրաժարւում եմ քըքրելուց, որովհետև, ինչ սուտ ասեմ, երբէք միտք չունիմ աչքերս քոռացնելու: Խնդրում եմ միւս անգամ ազատել ինձ այդպիսի անտանելի տանջանքից և եթէ կըլսէք իմ համեստ խորհրդին՝ այլ ևս չընդունել այդպիսի ծըտի պըտի նուէրներ, որ բացի աչք քոռացնելուց ուրիշ ոչինչ արժէք չունին։

Ահա նամակը. —

Նոնոշիկ Աղաւնի!

Նամակներդ ստացայ: Շնորհակալ եմ, որ միշտ գրում ես: Չէի պատասխանում, որովհետև հանգիստ չէի։ Դու լաւ գիտես, որ վաղուց ազատութիւնից ձեռք էի վերցրել և զանազան սիրուն և քաղցրաձայն թռչունների փետուրներով զարդարուել, բայց անտէր լինի հին խասիաթս, երբեմն մոռացմամբ սոխակի փոխարէն ագռաւի ձէնով էի երգում և ինքս ինձ մոռանում։ Կեղծութիւնս բռնուեց, այլ ես ոչ դեղձանիկ եմ և ոչ սոխակ, այլ հին սև ագռաւը՝ փետրած ու պոկած։ Սիրամարգը իւր փետուրներն է պոկել, միւս սիրուն թռչուններն էլ իրենցը։ Տկլորուել մնացել եմ, իսկական փետուրներս եմ փնտռում էն էլ չեմ գտնում. քամին տարել է։ Փախչելու եմ Բաքու, ուր մտադիր եմ 200 տարի առաջ կորած մի ագռաւի յիշատակին կոլիբրիի պէս երգել ու ճառել, որ աշխարհին մոռացնել տամ ագռաւութիւնս. այնտեղից խփելիք հեռագիրս կըկարդաս։ Դու Կարսից տեղ չես երթալ, կերթաս Դաղըիայում եղած փողերն ստանում ամսէ ամիս, բերում և բաժանում ուսուցիչներին։ Այս իմ նանն էլ կարող է անել։ Բայց այս, մեր աղանքը տեսչի և ուսուցիչների ընտրութեան էլ մասնակցում են (թէև այս վաղուց հոգևոր բարձր իշխանութիւնը իւր ձեռքում առած պիտի լինէր). բայց ինչպէս.—կատարեալ պէս հակառակ խելքի ու լոգիկայի։ Ընտրութեան սկզբունք ընդունում են ոչ թէ հմտութիւն, արժանիք, այլ նեղսիրտ կուսակցական կոյր հաշիւ։ Ես համոզուած եմ, որ այդ պարոններից ոչ ոք անփորձ ու առանց լաւ տեղեակ լինելու իւր տան համար ծառայ չի վարձի. սակայն երբ հարցը հասարակաց մի հիմնարկութեան համար է, չեն քաշուիլ երեկուայ երեխային մի ահագին դպրոց յանձնել կառավարելու, միայն թէ այդ երեխան անգիր իմանայ միջազգային տիրացուների «հաւատոյ հանգանակը»։ Այլապէս ինչպէս բացատրել Դատեանի նման անփորձ, անտակտ և անբարեխիղճ երեխային բարձրացնել մինչև տեսչական պաշտօն։

Այսօր այդ միևնոյն հոգաբարձութիւնը պ. Դատեանի գահն ուզում է բարձրացնել մի ուրիշ անձն, որ ծխական դըպրոցում մի երկու տարի ուսուցիչ վերակացուի պաշտօն է վարել, և այդ անում է դարձեալ նոյն սկզբունքով, որովհետև այդ փարաջաւոր արարածը շատ լաւ գիտէ նոյն հաւատոյ հանգանակը։

Եւ այստեղ հոգաբարձութեան կուրութիւնն ապշեցնում է նոյն իսկ մեր բազար-բաշի Մաթոսին։ Այս ընտրութիւնից մի քանի ամիս առաջ օրագրով (ափսո՜ս, միւս չմնաց օրագրի համարը) որոշում է՝ դպրանոցաւարտ մէկը եթէ ցանկանայ դաս ունենալ Երևանի թեմական դպրանոցում, նրան թոյլ տրուի դասախօսել մինչև երկրորդ դասարան։ Այժմ յիշեալ Մաթէոս վարդապետը (նախկին Բագրևա վարժապետ) աւարտել է Ներսիսեան դպրանոցի Զ. դասարանը։ Ուրեմն յիշեալ սուրբ հայրը եթէ կամենար ուսուցիչ լինել դպրանոցում, վերոյիշեալ օրագրի համաձայն թոյլ կըտային նրան միայն մինչև երկրորդ դասարան. էլ ինչպէս կարող է այդ միևնոյն անձը դպրանոցի յառաջադիմութեան ղեկը ձեռք առնել։ Հսկել Գ. Դ. Ե. և Զ. դասարանների դասաւանդութեան վրայ։ Գոնէ ինքնաշխատութեան յատուկ ապացոյցներ էլ չի տուել դպրոցական կամ մանկավարժական գրականութեան մէջ, որ կարելի լինէր մի կերպ հաշտուել այդ մտքի հետ։

Հարկաւ «смѣлость города беретъ», և մեր տեսչացուն այս յատկութիւնը ծայրայեղ ունի և տուել է գեղեցիկ ապացոյցներ իւր համարձակութեան. յիշենք արդեօք Շուշում առաջնորդի աթոռ բազմելը, լրագրներում բարձր վարչութեան գլխին խրատներ ու նախատինքներ կարդալը, ինքնագլուխ Ալէքսանդրապոլում կարգադրութիւններ անելը։ Սակայն դրանք բոլորն այլ բան են համեմատած դպրանոց կառավարելու հետ, ուր նոյն իսկ ճեմարանաւարտ ուսուցիչներ (էլ չեմ ասում համալսարանականները) ամբողջ գլխով բարձր պիտի կանգնած լինեն այդ վարդապետից. իսկ փարաջաներով բան չի շինուիլ։

Խոմ ինչ որ գրեցինք առանց նեղութեան կըհասկանար և ուրիշն կըբացատրէր ամեն մի մարդ, եթէ վերոյիշեալ հանգամանքներին ծանօթ է. սակայն արի տես, որ մեր լոգիկայից զուրկ հոգաբարձութիւնը ոչ միայն այս անհեթեթութիւնը չտեսնելու է տալիս, այլ և վըստահանում է դիմել Վեհափառին, պնդել իւր ընտրութեան վրայ հակառակ առաջնորդ և հոգաբարձութեան նախագահ Սուքիաս արքեպիսկոպոսի բանաւոր պատճառաբանութեան, որ հէնց վերոյիշեալ օրագիրն է մատնացոյց անում։

Ցանկանում են վիճել ու կռուել և սպառնալ, «հակառակ դէպքում հրաժարուել» (ինչ լաւ կանէին). բայց հրաժարականը տալ գիտէք ում,—ո՛չ իրենց հաստատող և ի պաշտօն հրաւիրող վարչութեան, այլ «իրենց ընտրող ժողովրդին»։ Եւ այս ասողը գործերի մէջ մազը-մորթը սպիտակացրած փաստաբան է։ Գիւղացի տանուտէրը գիտէ, որ երբ ինքը պիտի հրաժարուի, հրաժարականը տալիս է ո՛չ թէ իրեն ընտրող ժողովրդին, այլ գաւառապետին, որ սա էլ ուղարկի նահանգապետին. իսկ մեր փաստաբան աղան ագէտ գիւղացուց էլ աւելի ագիտանում է. հարկաւոր է կուրանալ. միջազգային տիրացուների դաւանանքն այդ է պահանջում։

Ահա այս ողորմելի տեսչացուի առաջ վիզ ծկած կանգնել է դպրանոցը, իսկ հոգևոր բարձր իշխանութիւնը, որ կարող է բերնի մի խօսքով բաղդաւորել դպրանոցը, լուռ է դեռ, և ո՛վ գիտէ հէնց իր լռութեամբ է քաջալերում դպրանոցին օտար ու խորթ հոգաբարձուներին մի ապիկար մարդու տեսուչ հրաւիրել վերջ ի վերջոյ հակառակ թեմի առաջնորդի բոլոր դիմադրութեան։

Այդ մեզ այնքան էլ անբացատրելի չի երևում, որովհետև հոգաբարձուները Մաթէոս վարդապետին ընտրել են Մեսրոպ վարդապետի խորհրդով. իսկ վերջինս ուղարկուած էր հոգաբարձուներին խորհրդի հրաւիրելու (կարծես առաջնորդն այդ չէր կարող անել)։ Է՜հ, ինչ զարմանք, երբ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչն այդպէս է թելադրում. ինչո՞ւ հոգաբարձութիւնն էլ չպնդի։

Առաջնորդը ցանկանում է Եղիկ վարդապետին, որն ըստ ամենայնի յարմար տեսչացու է, բարձրագոյն կրթութեան տէր, բարեխիղճ, ճեմարանում քանի տարիներ ուսուցչի, տեսչի, օգնականի և այլ պաշտօններ վարած։ Այս գիտեն հարկաւ և մեր հոգաբարձուները, բայց որ «ի նոցանէ» չէ, ամեն բան խաւար է լինում. «Չենք ճանաչում» են ասում։ Մաթէոսին ճանաչում են ..

Մեր ջերմ ցանկութիւնն է վերջ տալ այս կամայական, անմիտ պնդումներին. խղճալ մեր դպրանոցին, որ անղեկ նաւի պէս տարուբերւում է. տալ մեզ արժանաւոր տեսչացու և ապացուցանել, որ սրտացաւ և նախանձախնդիր են տառապեալ ժողովրդի բարօրութեանը։

Երևանցի

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

Պետերբուրգի հոլանդացոց պաստոր Գիլոտ գնացել էր Հոլանդիա, որտեղ ունկնդրութիւն է ունեցել նախագահ Կրիւգերի մօտ և այժմ, ռուս թերթերի ասելով, հետևեալն է հաղորդում։ Ծերունի նախագահը ներկայումս աւելի, քան երբևիցէ, յոյս ունի, որ բուրերը պիտի յաղթանակեն, և կարծում է, որ հաշտութիւն կըկայանայ շուտով։ Անգլիան դիմել է նախագահին, առաջարկելով որ հաշտութիւն կայացնեն և ապա հաստատուն խաղաղութեան պայմաններ մշակեն։ Նախագահն այսպէս է պատասխանել բառացի. «Ես ձեզ չեմ հաւատում. նախ խաղաղութիւն հաստատենք և ապա դադարեցնենք պատերազմական գործողութիւնները»։ Նախագահն առանձին դեսպանների միջոցով նպաստաւոր տեղեկութիւններ է ստանում Տրանսվաալում և Օրանժի հասարակապետութեան մէջ տեղի ունեցող պատերազմական գործողութիւնների մասին։ Ինչ վերաբերում է Կապի գաղութին, այնտեղ աֆրիկանդերների կէսն արդէն բացարձակապէս ապստամբած է անգլիացիների դէմ։ Նախագահ Կրիւգերը յայտարարել է, թէ հաշտութիւն կարելի է կայացնել միմիայն երկու հասարակապետութեան կատարեալ անկախութեան պայմանով։

— Անգլիական թերթերը նորանոր տեղեկութիւններ են հաղորդում, որոնք ցոյց են տալիս, որ Կիտչեների կոչը գրեթէ ոչ մի ազդեցութիւն չի գործել բուրերի վրայ։ Ինչպէս արդէն յայտնի է հեռագրներից, բուրերի պարագլուխները՝ Շտայնը և Դեւետը հրաժարուել էին ընդունել երկու պաստորի, որոնք գնացել էին նրանց մօտ, որ յորդորեն նրանց անձնատուր լինելու։ Լրագրների ասելով, նախագահ Շտայնը յայտարարել է, թէ այժմ աւելի, քան մի տարի առաջ, յոյս ունի, որ բուրերը պիտի յաղթանակեն, որովհետև ֆինանսական դժուարութիւններն Անգլիային շուտով կըխանգարեն պատերազմը շարունակել։ Բացի դրանից, նրա հեղինակութիւնը Հարաւային Աֆրիկայում արագապէս ընկնում է։ Բացի դրանից, անգլիական զօրքերը բռնած են միայն մայրաքաղաքներն ու երկաթուղու գծերը, մինչդեռ բուրերն ազատ շրջում են հասարակապետութիւնների բոլոր հողերի վրայ։ Ինչ վերաբերում է Դեւետին, նա բաւականացել է միայն հետևեալ պատասխանը տալով վերոյիշեալ պաստորներին. «Դուք պաստոր էք, և ձեր տեղը եկեղեցու բեմն է։ Անձնատուր լինելու խնդիրը ձեզ չի վերաբերում»։

—«Daily Mail» ի ասելով, Կիտչեները վճռել է չբաւականանալ իւր կոչով, այլ նոր միջոցներ ձեռք բերել։ Նա առաջարկել է պատերազմական դրութիւն հրատարակել ամբողջ Կապի գաղութում. գաղութի նահանգապետը համաձայն է, բայց մինիստրութիւնն ու գրեթէ ամբողջ բնակչութիւնը դէմ է։ Բուրերն իրենց կողմից սպառնում են արտակարգ միջոցներ ձեռք առնել, եթէ Կիտչեներն իրագործէ իւր մտադրութիւնը։ Յովհաննէսբուրգում քննւում է Տրանսվաալի պետական քարտուղար Բրուկմի դատը։ Անգլիական թերթերի ասելով, դատարանում կարդացուեցան շատ դոկումենտներ, դրանց թւում Լուի Բոթայի ստորագրութիւնը կրող նամակներ, որոնց մէջ նա բուր սպաներին առաջարկում է չանհանգստանալ Կիտչեների կոչից և հաղորդում է, որ բուր զօրավարների խորհրդում վճռուած է օրէնքից դուրս հրատարակել անգլիական գլխաւոր հրամանատարին, նրա ընդհանուր շտաբին և բրիտանական սպաներին և հրացանի բռնել այն բոլոր անգլիացիներին, որոնց ձեռքին զէնք կըլինի։

## ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բեթէնիում սեպտեմբերի 8 ին զօրահանդէսից յետոյ տեղի ունեցած նախաճաշի ժամանակ Լուբէն վեր կացաւ հանդիսաւոր լռութեան մէջ և արտասանեց հետևեալ ճառը. «Տէր Արքայ, ֆրանսիական հասարակապետութեան կողմից շնորհակալութիւն յայտնելով Ձերդ Մեծութեանը և Նորին Մեծութիւն Կայսրուհուն այն բանի համար, որ Դուք հաճեցիք ներկայ լինել այս օրերի խրախուսիչ հանդէսներին, ես մտքով սլանում եմ դէպի քաղաքական այն մեծ գործը, որ կատարուեց այդ հանդէսներից առաջ և որից դրանք ստացան իրենց բոլոր նշանակութիւնը։ Ձեր արժանափառ Ծնող Կայսր Ալէքսանդր III-ի և նախագահ Կարնոյի նախապատրաստած ու հաստատած և «Pothuou»-ի վրայ Ձերդ Մեծութեան ու նախագահ Ֆելիքս Ֆօրի հրատարակած ֆրանկո-ռուսական դաշնակցութիւնը կարողացաւ հաստատել իւր բնաւորութիւնն ու պտուղներ տալ։ Եթէ ոչոք չի կարող տարակուսել այդ դաշնակցութեան հիմքը կազմող էական

գաւան բըոյց մօտ, մինչև կըկարգադրեմ քո վիճակը։ Զգուշացիր հաղղուանում ջալլամից, որ փետուրներիս պոկելու պատճառն է դառել։ Այնքան պարտքեր է հաւաքուել վրաս, որ մոլորուել եմ։ Կերածս փողերը քթիցս պիտի բերեն թէ կարսեցիք և թէ մանաւանդ հաղղուանի մեծ ջալլամը, Աստուած դրանց քիթը թափի իշալլահ։ Եթէ իմ տեղը քեզնից հարցնելու լինեն, չասես թէ ո՛ր տեղ եմ, թէ չէ ջալլամը գործի համար դատարան է քաշ տալու ինձ .. Լաւ պահիր քեզ, որ խօսակցութեան առարկայ չըդառնաս. մի քանի բաներ դիպել են ականջիս։ Ինչպէս երևում է՝ ինձնից երես ես ուզում դարձնել և ուրիշների հետ էլ ես զուղոնում, որի համար սաստիկ նեղացել եմ։ Ընդունիր կողկողագին կարօտս հետ ջերմագին համբոյրս։

Մնամ քեզ ու ինձ համար միշտ ցաւող
Խղճուկ ագռաւ

Տեսանք այժմ, թէ ինչ յիմար բովանդակութիւն ունի դուրս բերածս նամակը։ Արժէ՞ միթէ մարդիկը թողած՝ թռչունների նամակագրութիւններով զբաղեցնել «Հայելի»-ի ընթերցողներին։ Դարձեալ կրկնում եմ, լաւ կանէք, որ ձեռք վերցնէք այդպիսի յիմար ընծաներից։

Ձեր խ. ծ. Ներախոյս

### Իմ պատասխանները

(շար. և վերջ)

Պետերբուրգից մի պարոն մեզ հարցնում է.—Ե՞րբ պիտի վերջանան հայր Նաղարեանի և Սեդ. Մանդինեանի թեր ու դէմ գրութիւնները այս վերջնիս «Փաքրաւ»-ի քարոզների թարգմանութեան մասին։

Պատասխան. — Երբ որ «Հայելի»-ի պատրաստած «Քարոզների ժողովածուն» լոյս կըտեսնի (տես «Հայելի»-ի յունուարի համարը. «Նոր-Դար» № 48)։

Մոսկուայից մի հայ բժիշկ ուսանող գրում է. «Ի՞նչ են ուզում ինձնից ընկերներս՝ չգիտեմ, ուզում եմ ամուսնանալ մի գեղեցկադէմ օտարուհու վրայ և չեն թողնում։ Ի՞նչ է պատճառը՝ չգիտեմ։

Պատասխան.—Ղալաթ են անում։ Գիտցէք, որ հայի նախանձն այդտեղ մեծ դեր է կատարում, և համոզուած ենք, որ նրանցից ամեն մէկն անպատճառ ինքն է ուզում ձեր ընտրելին խլել ձեր ձեռքից։ Միակ ճարն այն է, որ դուք հրաժարուէք նրանից և կամ ձեր ընկերների համար այդպէս շնորհալի մի մի հարսնացու գտնէք։

Խարկովից մի ուրիշ հայ ուսանող գրում և հարցնում է. «Պարապել չեմ կարողանում, քննութիւն ունիմ և յոյս չունիմ, որ պարզներս դուրս գամ. շշմածի պէս եմ. ինչ անեմ»։

Պատասխան.—Եկէք Կովկաս և ամուսնացէք մի մեծ օժիտի, ախ, սխալուեցայ, աղջկայ վրայ։

Կիևից դարձեալ մի ուսանողից հետևեալ նամակն ենք ստացել. «Երբէք գլուխս այսպիսի մեծ քարի տուած չէի։ Առաջ մենակ էի սոված՝ այժմ երեքով և դուցէ շուտով չորսով կըլինենք սոված. հօրս հարսի դրութիւնն է այդպէս ցոյց տալիս, որ կարծես ուրիշ բան ու գործ չունի։ Կնօջս վրայ տուած փողը վերջացել է, հայրն էլ կենդանի չէ, որ գիժեմ նրան. ինչ անելու է չգիտեմ։ Բագու գնալս էլ դեռ վաղ է, երկու տարի էլ միջոց ունիմ, որ աւարտեմ»։

Պատասխան.—Կնօջը թողնելու և նորը որոնելու է, որպէս զի դարձեալ մի քանի տարի յետոյ նախ երկուսով սոված մնաք, յետոյ երեքով, չորսով... ցնոր ապահարզան, որ այժմ առանձին դժուարութիւններ չունի. եթէ անգամ մօտիկ ազգականներից նոր հարսնացու ընտրելու լինիք...այդ մասին կարող էք անգամ դիմել պ. Տարխմուտեանցի—խորհրդին։

Բոռնէօ կղզուց հետևեալ երկտողն ենք ստացել. «Անգութ ճակատագրին շնորհիւ հոս - Բոռնէօ ինկած եմ և անհունս կըփափագիմ հայ լրագիր մը հրատարակել. Թախանձագին կըպաղատիմ ձեր զօրաւոր միջնորդութիւն առ Պաքու քաղաքի իմ ազգային համարին եղբարքս յորդոր կարդալով գնոսս որ արագատիպ մեքենայ մը ինծի նուէր ուղարկելու շնորհն ընեն, որով մեզ ազգերնուս յառաջադիմութեան համար ըրած մեր երդումն կատարած ըլլալու բարեբախտութիւնն կունենամք»։

Պատասխան.—Ձեր ցանկութեան մասին հեռագրեցինք արդ. Եղիշէ վարդապետին, որ ձեր համար էլ հոգս տանի, հաստատ համոզուած լինելով, որ քանի նա Բագւումն է՝ մեր յորդորն ու խօսքը բագուեցոց վրայ չի ազդիլ։

Պալես Թոռը

### «ՀԱՅԵԼԻ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

Վենետիկ ս. Ղազարի վանքից. 26 օգոստ.—Ամբողջ Վենետիկը ցնծութեան մէջ է, մանաւանդ ս. Ղազարի վանքի միաբանութիւնը, որ իւր 200 ամեակն է կատարում։ Թափուած հեռագրների հեղեղից հրճուանքով տեսնում է նա, թէ տակաւին աշխարհիս երեսին ինչքան խելօք հայեր են մնացել։ Ստացուած են աւելի քան 5000 հեռագրներ, որոնցից 4518-ը բացառապէս լուսաւորչական հայերից *)։

Նոյն տեղից.—Թիֆլիսի մի ամենօրեայ թերթի ներկայացուցիչ Թղթակիցը չափազանց շլացած 200-ամեակի շքեղ փառահեղութիւնից, այդ օրուան անջինջ յիշատակը յաւերժացնելու համար, կաթոլիկութիւն ընդունեց և խոստացաւ էլ առաջիկայ պապի ընտրութեան էլի պատգամաւոր լինել Հնդկաստանի, Աւղանստանի, Մանջուրիայի և այլ տեղերի։

Նոյն տեղից.—Ստացուեց «Հայելի»-ից հեռագիրը, որի բովանդակութիւնն էր. «Մխիթար աբբայի հոգին, երևնալով մեր «Հայելի»-ի մէջ, չգիտենք ինչո՛ւ լաց եղաւ և խնդրեց իւր կողմից շնորհաւորութեան փոխարէն այդ լացն ու հեծկլտանքը հաղորդել իւր ժառանգներին։ Կատարելով մեծ հօր խնդիրը, ցանկանում ենք յաւերժացեալին չչարչարել և ուրախացնել. չմոռանանք աւելցնել, որ պատկառելի ծերունին գոհութիւն յայտնեց «Նոր-Դար» ի խմբագրութիւնից, որ պատճառ էր եղել Սևանի ս. Աստուածածնի պատկերի վանքը չուղարկելու համար։ Նա համոզուած էր, որ ս. Ղազարի վանքում չկայ մէկը, որ այն մաքուր սրտով ու մտքով աղօթէ նրա առաջ, ինչ անարատ սրտով ու մտքով ինքն էր աղօթել սրանից 200 տարի առաջ»։

Նոյն տեղից.—Ստացուեց Թիֆլիսի էն լրագրի հեռագիրը, որով գրում էր. «Որովհետև միաբանութեանդ հրատարակած «Ոսկան» գրքի մէջ լրագրիս հանգուցեալ խմբագրի պատկերը Մխիթար աբբայի պատկերից էլ մեծ էր հրատարակուած, ուստի խմբագրութիւնս մեծ պարտք է համարում իւր հիմնադրի և նրա հետևորդների տպագրուած բոլոր աննպաստ կարծիքները միաբանութեանդ գործունէութեան մասին՝ յետ առնելով իսպառ մոռանալ և Կովկասի մայրաքաղաքից ովսաննա՜ բռնալ քրտնավաստակ միաբանութեանդ առանց կրօնի խտրութեան դրօշակի հովանեաց տակ։ Չըմոռանանք լրագրիս ներկայ խմբագրի պատկերն էլ մի տեղ խցկելու ձեր հրատարակութիւնների մէջ, քանի որ սա էլ նախագծուած յիմարութիւնից, չէ, ուղղութիւնից «մի մազաչափ» էլ չի շեղւում։

Նոյն տեղից.—Ստացուեց ս. Էջմիածնից խփուած հեռագիրը հետևեալ իմաստով. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք, վտարանդի մեկուսացեալք և խռովեալք, և ես յանկուցից զձեզ, զի լուծն իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի»։

---

*) Երեկ ս. Էջմիածնի 1600-ամեակն էլ կատարելիս ճիշտ նոյն թւով հեռագրներ կըստացուէին աշխարհիս ամեն ծայրերից, որոնցից 4518-ը կաթոլիկ հայերից կըլինէին։ Սրանք, ինչպէս լսում ենք, իրենց փողը են տալու 400 տարի յետոյ, որովհետև, ինչպէս հաղորդում են՝ ս. Էջմիածինը կլոր թիւ սիրելով՝ մտադիր է ո՛չ թէ 1600 ամեակ, այլ 2000 ամեակ կատարել։ Ծ. Հ. Խմբ.

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ Փառնակէս

խաղաղասիրական գաղափարի վերաբերմամբ, տպա այնու աւելի ես ոչոք չի կարող չխոստովանուել, որ նոյն այդ դաշնակցութիւնը զօրեղապէս նպաստեց եւրոպական պետութիւնների միջև հաւասարակշռութիւնը և խաղաղութեան անհրաժեշտ պայմանները պահպանելուն, այն խաղաղութեան, որն արդիւնաւէտ լինելու համար չպէտք է մնայ կասկածելի: Այս դաշնակցութիւնը զարգացաւ տարիներով: «Շարժման» և յարուցուած խնդիրների դէմ ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը կանգնած էր աչալուրջ, վճռական, իւր սեպհական շահերը համաշխարհային շահերի հետ հաշտեցնող, չափաւոր, որովհետև նա հզօր է, և առաջուց տրամադիր ընդունելու արդարութեան և մարդկայնութեան թելադրած վճիռները: «Նոր շարժումը», նրա արդէն տուած բարիքը գրաւական են այն բարիքի, որ նա պիտի տայ դեռ ապագայում և այս անպայման հաւատով, երկիւղածութեամբ պատուելով գործի ազնիւ հիմնադիրների յիշատակը, այն գործի, որի փառաւոր վաւերացումը հանդիսանում է այսօրը, ես բարձրացնում եմ բաժակս ի փառս և ի բարօրութիւն Ձերդ Մեծութեան, Նորին Մեծութիւն Կայսրուհու և Ձեր ամբողջ Ընտանիքի, ի վեհութիւն և ի բարգաւաճումն Ռուսիայի, Ֆրանսիայի բարեկամ դաշնակցի»: Օրկեստրը նուագեց ռուսական հիմնը: Լուբէն իւր բաժակաճառն արտասանեց, առանձին ոյժ տալով իւր խօսքերին և մի քիչ յուզուած: Յուզումը տիրեց բոլոր ներկայ եղողներին և աւելի մեծացաւ, երբ Թագաւոր Կայսրն սկսեց արտասանել իւր պատասխանն աւելի պարզ և որոշակի. «Պարոն Նախագահ, այն րոպէին, երբ Մենք թողնում ենք Ֆրանսիան, ուր Մենք կրկին անգամ այնքան սրտագին ու ջերմ ընդունելութիւն գտանք, Ես կարիք եմ զգում ասելու Ձեզ, թէ որքան անկեղծ շնորհակալ ենք Մենք այդ ընդունելութեան համար և որքան խորին կերպով զգացուած: Մենք, Կայսրուհին և Ես, առ միշտ պիտի պահպանենք թանկագին յիշողութիւնն այս մի քանի օրերի մասին, որոնք այնքան հարուստ էին Մեր սրտերը խորապէս թափանցած տպաւորութիւններով, և հեռուից ես, ինչպէս մօտիկից, պիտի շարունակենք հաղորդակից լինելու այն ամենին, ինչ որ վերաբերում է բարեկամ Ֆրանսիային: Մեր երկիրներն իրար հետ կապող կապերն աւելի ևս ամրացան և վաւերացում ստացան այն փոխադարձ համակրանքների արտայայտութիւնների մէջ, որոնք պերճախօս կերպով երևան եկան այստեղ և այնքան ջերմ արձագանք գտան Ռուսիայում: (Շարժում): Սրտագին միացումն երկու մեծ պետութիւնների միջև, որոնք ոգևորուած են ամենախաղաղասիրական մտադրութիւններով և որոնք, կարողանալով յարգանք ներշնչել դէպի իրենց իրաւունքները, աշխատում են ամենևին չշօշափել ուրիշների իրաւունքները,—խաղաղեցնող մի թանկագին տարր է ամբողջ մարդկութեան համար: (Շարժում): Ես խմում եմ Մեզ բարեկամ և Մեր դաշնակից Ֆրանսիայի բարօրութեան, ֆրանսիական քաջամարտիկ զօրաբանակի և գերազանց նաւատորմղի կենացը: (Ծնծագին բացականչութիւններ): Թոյլ տուէք ինձ, պարոն Նախագահ, կրկնելու Ձեզ Մեր բոլոր շնորհակալիքը և բարձրացնել Իմ բաժակը Ձեր պատուին»: Օրկեստրը նուագեց մարսելիէզը: Գոհունակութեան խիստ նկատելի զգացմունքով ֆրանսիացիներն ու ռուսներն բազմիցս բաժակները խփում էին իրար ի պատիւ Կայսրի, Կայսրուհու և Լուբէի:

—Նորին Մեծութիւնը Դելկասէին շնորհեց Իւր և Կայսրուհու պատկերները ստորագրութիւններով: Դեղաքանդակ շրջանակը զարդարուած է շողակներով:

—Կայսրը, Վալդեկ Ռուսսոյին հրաժեշտ տալով, խնդրեց Նրան ընդունել 100,000 ֆրանկ Պարիզի աղքատների համար, 15 000 ֆրանկ Դիւնկիրխենի աղքատների համար, 15,000 ֆրանկ Կոմպիէնի կարօտեալ բնակիչների համար, 15 000 ֆրանկ Ռէյմսի նոյնպիսի բնակիչների համար և 500 Ֆրանկ Ռիպօյում (Թուրի մօտ) պատահած պայթումի զոհերի համար:

—Կայսերական Զոյգը սեպտեմբերի 8 ին, ժամը 4 ին, մեկնեց Ֆրենուարի կայարանից: Վագոն նստելուց առաջ քանի խօսքեր ուղղեց Լուբէին, որ պատասխանեց գլխի խոնարհումով: Կայսրը և Նախագահն այս դրութեան մէջ մնացին մի քանի րոպէ: Ամենքի հայեացքն ուղղուած էին նրանց վրայ: Բարձր հասարակութեան ծովափին հաւաքուած ներկայացուցիչները չէին ծածկում իրենց հիացմունքը: Լուբէն, տիկ. Լուբէն և մինիստրները վերադարձան Պարիզ ժամը 4-ին 12 րոպէին:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Лучшее для зубовъ.
ОДОЛЬ
ЦѢНА 1 Р. 50 К.

Շատ լաւ Թարմացնող

Պահպանում է ատամները փչանալուց:

չխարհիս մէջ ամենատարածուած ջուրը՝ բերանը ողողելու համար:

Անկասկած, աշխարհիս մէջ ցարդ գոյութիւն ունեցող կօսմետիքական միջոցներից սա ամենալաւն է բերանի համար:
(М ) № 441 14 — 8

Ծախւում են տասը րուբլով «Շղթայ» Նաւթարդիւնաբերական ընկերութեան փայեր:
Հասցէն՝ Հայլաբար, Պրովիանտի մագազէնի հանդէպ՝ տուն Բայօղլու, № 20. Սահակի մօտ:
(725) 1-1

ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱԿԱՐ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻ

Չորրորդ տիպ
Գինն է 30 կոպ.
Գումարով դիմումն կրկինի:
Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная торговля կամ հեղինակին Эривань, Макару Теръ-Саркисянцъ, կամ Эривань, книжный магазинъ Петроса Ованнисянцъ.

Նոյն տեղերը և անձերին դիմել նաև Պետերբուրգում նոր լոյս տեսած նոյն յօրինողի հետևեալ դասատետրի համար

Уроки чистописанія
ДЛЯ ДѢТЕЙ
(О.) 10 — 5

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ !
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ
ՕՃԱՌ
ԴԵՂԱԳՈՐԾ
Գ. Փ. ԻՐԳԵՆՍԻ

Ոչնչացնում է մուները, արևից այրուածքը, դեղին բծերը, խլունգները, բշտիկները և օգնում է աւելորդ քրտնելու դէմ: Առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ:

Մի կտորի գինը 50 կ., ½ կտորին 30 կ. Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում:

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Փ. Իրգենսի մօտ, Մոսկուայում:
(М.) № 192764 24—19

ГОРЬКАЯ ВОДА
САКСЛЕНЕРА
ИСТОЧНИКА
„ГУНЯДИ ЯНОСЪ“
СЛАБИТЕЛЬНАЯ ВОДА
ДѢЙСТВУЕТЪ ЛЕГКО и ВѢРНО.
ПРЕИМУЩЕСТВА:
МЯГКІЙ НЕ ПРОТИВНЫЙ ВКУСЪ,
МАЛАЯ ДОЗА.
ВО ИЗБѢЖАНІЕ ПОДДѢЛОКЪ ПРОСИМЪ
ОБРАЩАТЬ ВНИМАНІЕ
на изображенную здѣсь
МАРКУ ПОРТРЕТЪ
которая неизмѣнно находит. на этикетѣ каждой бутылки настоящ. нашей воды

ГОРЬКАЯ ВОДА САКСЛЕНЕРА
ИСТОЧНИКА ГУНЯДИ-ЯНОСЪ

ПРЕДПИСЫВАЕТСЯ ВРАЧЕБНЫМИ АВТОРИТЕТАМИ ВЪ ТѢХЪ СЛУЧАЯХЪ, КОГДА ТРЕБУЕТСЯ УПОТРЕБЛЕНІЕ ЛЕГКАГО НО ВѢРН. СЛАБИТЕЛЬНАГО.
ДЛЯ НОРМАЛЬНАГО ПРІЕМА ДОСТАТОЧНО ½ ОБЫКНОВЕННАГО СТАКАНА.
МНОГО МИЛЛІОНОВЪ
БУТЫЛОКЪ ЕЖЕГОДН. СБЫТА
ЯСНО ДОКАЗЫВАЮТЪ БЕЗВРЕДНОСТЬ СЛАБИТЕЛЬНОЙ ВОДЫ ЭТОГО НАТУРАЛЬНАГО МИНЕРАЛЬН. ИСТОЧНИКА.
Продается у всѣхъ дрогистовъ и аптекарей.
(М.) № 202933 12 — 9

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՅԻ
[Capsules au Matico]
ԳՐԻՄՈ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրուած Ռուսիայում

Աջողութեամբ գործ է ածւում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չյոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածւում Կոպայի բալզամը հեղուկ ձևով:

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:
(М,) № 7728 23 — 15



(М) 90582 52 - 42

## ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Ծախւում են գործածուած, նոր և բոլորովին դուրս կանգնած կահկարասիք, տուն կահաւորելու իրեր, բրոնձ, սարք, ոսկի, թանկագին քարեր: Москва, Неглинный проѣздъ, пассажъ Солодовникова рядомъ съ Абрикосовымъ. Մոսկւա, Սոլոդովնիկովի պասսաժ մուտքը Նեգլինկայ:
(М.) 8514 23—14

## ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այսու յայտարարում է, որ վարչութեան մէջ ժամը 12-ին, սեպտեմբերի 15-ին նշանակուած է աճուրդ քարելու և կարգաւորելու ամբողջապէս Ծղնէթի փո դոցը՝ Բրենովեզնօյի փողոցից սկսած մինչև Վարազիս-խևի 156,4 սաժէն երկարութեամբ և 4 սաժէն լայնութեամբ և 625,6 քառակուսի սաժէն տարածութեամբ, նոյնպէս և 173 կուբիկ-սաժէն քարելու գործ 2252 րուբլի 26 կոպէկ արժողութեամբ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են ծանօթանալ պայմաններին վարչութեան շինարարական բաժնում ամեն լի օր առաւօտը ժամը 9-ից մինչև օրուայ ժամը 3-ը:
(722) 3 —2

## „ՇՂԹԱՅ“

Նաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն պ. պ. բաժնետէրերի, որ երրորդ 10% վճարը, այսինքն իւրաքանչիւր փային 10 րուբլի, նշանակուած է սոյն սեպտեմբերի 14-ից մինչ 22-ն ներփակուած:

Բաժնետէրերը վճարման ժամանակ պէտք է ներկայացնեն բաժնետոմսերը:

Նաև յիշեցնում է ընկերութեան պայմանների 7-րդ յօդուածը: Ընկերութեան գրասենեակը, Երևանեան հրապարակ՝ տուն Խարազեանի:
(716) 4 – 3

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
ԻՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՈՎ ՅԱՅՏՆԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾ
ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՈՆ
ԿՏՈՐԸ 20 ԿՈՊԷԿ
10—3
(М) 95224

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку Пречещная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են ատտեստատներ. Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական տնտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրումն ձեռագրի):

Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և «Եղբ. Թովիանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում: Կուրսերի կանոնադրութիւնը уставъ մանրամասն ծրագիրը և տրւում են և ուղարկւում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ Каспарову, Баку.
(678) 25—18

SANTAL
MIDY

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Այս կապսուլների մէջ պարունակուած զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հոնորէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ կապայ-բալզամի և կուբէբայի դէմ: Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կծիկը: Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսուլի վրայ լինի սև տառերով դրոշմուած կնիքը:

MIDY

Պահեստը Ռուսիայի գլխաւոր դեղատներում:
(М.) № 200369 60—38

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

### ԹԻՖԼԻՍ, ԼԵՐՄՈՆՏՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, № 9

Ցանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքն աւարտած աշակերտների և աշակերտուհիների՝ թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին՝ Ս. Մանուէլեանցին: Աւարտողներն ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրինաւոր ատտեստատներ:

Ընդունելութիւններն սկսուելու են սեպտեմբերի 1-ից: Կուրսերի ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ձրիաբար եղբ. Թովմանովների բանկային գրասենեակում և Կուրսեր հիմնողի բնակարանում: Օտար քաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэльянцу. (650) 12—9

Дов. цензурою Тифлисъ, 1901 сентября 14-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387